



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 1
ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՆՈՐՀՐԴԻ՝
2023 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 30 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Գիտխորհրդի 2022-23 ուստարվա մեկնարկին առնչվող հարցերի քննարկում:
2. Նոր ձևավորված գրասենյակի աշխատանքային գործառույթների ներկայացում:
3. Մագիստրատուրայի ընդունելության 2-րդ փուլի արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 21-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Այնուհետև դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի ղեկանի փոփոխությամբ պայմանավորված՝ փոխվել է ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղարը. գիտքարտուղար է նշանակվել հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Լուիզա Մելքոնյանը: Գիտխորհրդի կազմում նախատեսվում է կատարել անդամների փոփոխություն՝ սահմանված նորմերի պահպանումով:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի տեղակալ դոց. Ա. Մարգարյանը տեղեկացրեց, որ ուսումնական տարին բնականոն մեկնարկելու համար նախապատրաստական գործընթացները բարեհաջող իրականացվել են, դասացուցակները համաձայնեցված են, ֆիքսված, բոլոր դասերը կկայանան

նախատեսված ժամակացույցով: Դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց նաև, որ բոլոր դասախոսները տեղեկացված են ԵՊՀ էլեկտրոնային համապատասխան հարթակներում նախատեսվող գործընթացների մասին, և սահմանված ժամկետներում բոլոր լրացումները կիրականացվեն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը ներկայացրեց հայ բանասիրության ֆակուլտետի նոր ձևավորված գրասենյակի կազմը, հստակեցրեց գործավարների աշխատանքային գործառույթները դրանց բաժանումը՝ ըստ աշխատակիցների: Նշվեց, որ 4 գործավարներից 2-ը կգրադվեն ուսանողության հետ տարվող աշխատանքներով, իսկ մյուս 2-ը՝ ֆակուլտետի 2-ական ամբիոնների աշխատանքների կազմակերպման գործերով:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց, որ մագիստրատուրայի ընդունելության արդյունքները գոհացուցիչ չեն. ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերը գործելու են ուսանողների նվազագույն թվաքանակից էլ քիչ քանակով: Նշվեց, որ մագիստրոսական կրթության հանդեպ հետաքրքրությունը մեծացնելու և դիմորդներին գրավելու համար անհրաժեշտ են ծրագրային նոր փոփոխություններ, աշխատանքային նոր շուկաների որոնում, ուսանողների ընդգրկվածության մեծացում գիտական թեմաներին և դրամաշնորհներին, գործնական կարողությունների զարգացմանն ուղղված նոր մեթոդներ ու համագործակցություններ:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ «Արեղյանական ընթերցումներ» հերթական գիտաժողովի կազմակերպման վերաբերյալ հարցը:

Նշվեց, որ գիտաժողովը կազմակերպվում է հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ու հայոց լեզվի ամբիոնների համատեղ ջանքերով: Գիտաժողովին ներկայացվելու են մեծ լեզվաբանի կյանքին և գործունեությանը վերաբերող հոդվածներ և զեկուցումները: Նախապատրաստական աշխատանքները ընթանում են նորմալ:

բ/ Հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Մակարյանը տեղեկացրեց, որ ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտը նախատեսում է կազմակերպել ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով. կազմակերպչական աշխատանքներին կօժանդակեն և իրենց մասնակցությունը կապահովեն նաև ԵՊՀ հայ գրականության ամբիոնները:

գ/ ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոս Մարիանա Սամվելի Բոցինյանի «Նոր Նախիջևանի բարբառը որպես

ազգային ինքնության ցուցիչ» վերնագրով հոդվածը «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի հայերի միության սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Գալստյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ մրցույթին ներկայացված հոդվածը արդեն տպագրվել է ազդեցության բարձր գործակից ունեցող միջազգային ամսագրում և համապատասխանում է մրցույթի չափանիշներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոս Մարիանա Սամվելի Բոցինյանի «Նոր Նախիջևանի բարբառը որպես ազգային ինքնության ցուցիչ» վերնագրով հոդվածը երաշխավորել մասնակցելու «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի հայերի միության սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԱՍԻՍ. Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ